ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ – Ա

ՍԵՐՅՈԺԱ ՌԱՖԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՏԻԳՐԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԵՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սերյոժա Ռաֆիկի Սարգսյանին, Տիգրան Սերյոժայի Սարգսյանին և Հերմինե Հարությունի Հարությունյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Դ.Տեր-Սիմոնյան փողոց 3/4 բնակելի տուն» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0476-0020 կադաստրային ծածկագրով 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Դ.Տեր-Սիմոնյան փողոց, 3/5 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0476-0021 կադաստրային ծածկագրով 0,02396 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված չափորոշիչներին և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, հիմք ընդունելով Սերյոժա Ռաֆիկի Սարգսյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Դ.Տեր-Սիմոնյան փողոց 3/4 բնակելի տուն» հասցեում գտնվող՝ Սերյոժա Ռաֆիկի Սարգսյանին, Տիգրան Սերյոժայի Սարգսյանին և Հերմինե Հարությունի Հարությունյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0476-0020 կադաստրային ծածկագրով 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնքի Սպիտակ Սպիտակ ք. Դ.Տեր-Սիմոնյան փողոց 3/4 բնակելի տուն» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0476-0021 կադաստրային ծածկագրով 0,02396 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով օտարելուն:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնի չափով՝ 292 551,60 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1221 ՀՀ դրամ):